

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ	1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	6
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	8
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ	13
5. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ	13
ԱՄՓՈՓՈՒՄ	15

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2020 թվականին ՀՀ տնտեսությանը վրա հասած բացասական շոկերի ազդեցության և դրանց կառավարման ցածր արդյունավետության պայմաններում տնտեսությունում գրանցված խոր ճգնաժամի հետևանքները, ցավոք, շարունակվում են մնալ նաև 2021 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում: Երկրում կուտակված անվտանգային և մակրոտնտեսական ռիսկերի պահպանվող բարձր մակարդակը և ՀՀ կառավարության կողմից այդ ռիսկերի նվազեցմանն ու չեզոքացմանն ուղղված քաղաքականության միջոցառումների ոչ լիարժեք և հաճախ ժամանակավրեպ իրագործումը հետաձգում է ՀՀ տնտեսության վերականգնման հեռանկարները:

Այսպես, 2021թ. հունվար-սեպտեմբերին՝ ընթացիկ տարվա հունվար-հունիսի համեմատ **տնտեսական աճն** արագանալու փոխարեն դանդաղել է շուրջ 0.9 տոկոսային կետով և կազմել 4.1%¹: Աճի 2.7 տոկոսային կետը բացատրվում է ծառայությունների ոլորտով: Առևտրի, արդյունաբերության և շինարարության ոլորտները տնտեսական աճին նպաստել են համապատասխանաբար 0.7, 0.2 և 0.1 տոկոսային կետով: Գյուղատնտեսության ճյուղում գրանցված անկումը 0.1 տոկոսային կետով հակազդել է տնտեսական աճին: 2020թ. առաջին ինն ամիսների 6.8% տնտեսական անկման պայմաններում հաշվետու ժամանակահատվածում արձանագրված 4.1% տնտեսական աճը փաստում է, որ ՀՀ տնտեսությունը զարգանում է բավական ցածր տեմպերով, իսկ տնտեսության վերականգնում նախաճգնաժամային տարվա համեմատ դեռևս չի գրանցվել: Ավելին, ՀՀ կառավարության սպասումները² 2021թ. տարեվերջին 6.5% տնտեսական աճ արձանագրելու վերաբերյալ, նշված իրավիճակում չափազանց հավակնոտ են հնչում, իսկ երկնիշ տնտեսական աճ գրանցելու խոստումները պարզապես անիրատեսական են:

Պատկերը մտահոգիչ է նաև **տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ)** մասով: 2021թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ՏԱՑ-ի կուտակային աճը կազմել է ընդամենը 4.4%, այն դեպքում, երբ 2020թ. համապատասխան ցուցանիշը եղել է անկումային՝ շուրջ 6.8%-ով: Այսինքն, 2021թ. սեպտեմբերի դրությամբ ՀՀ-ում տնտեսության ակտիվությունը դեռևս չի վերականգնվել. 2021թ. հունվար-սեպտեմբերին տնտեսության մեջ թողարկված արտադրանքի իրական ծավալը նախաճգնաժամային տարվա (2019թ.) հունվար-սեպտեմբերի նույն ցուցանիշին

¹ Տնտեսական աճի և դրա բաղադրիչների մասով հաշվարկները կատարվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ՎԿ) կողմից ներկայացված «2021թ. I, II և III եռամսյակների համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) նախնական տվյալները» հրապարակման ցուցանիշների հիման վրա: Որպես բազային տարի վերցված է 2018 թվականը:

² Ներկայացված է ՀՀ 2022թ. պետական բյուջեի նախագծի ուղերձում:

զիջում է շուրջ 2.7%-ով: ՏԱՅ-ի 4.4% աճին հիմնականում նպաստել են առևտրի և ծառայությունների ճյուղերը՝ համապատասխանաբար 2.3 և 1.2 տոկոսային կետով: Ավելի համեստ դրական նպաստում են ունեցել շինարարության և արդյունաբերության ճյուղերը՝ համապատասխանաբար 0.3 և 0.2 տոկոսային կետով: Մինչդեռ գյուղատնտեսության նվազումը տնտեսական ակտիվությանը հակազդել է 0.2 տոկոսային կետով: Ստորև կանդրադառնանք ՏԱՅ-ի առանձին բաղադրիչների դինամիկային:

Արդյունաբերության ճյուղում մարտ ամսից նկատվող աճի միտումները 2021թ. երրորդ եռամսյակում շրջվել են հակառակ ուղղությամբ. 2020թ. երրորդ եռամսյակի համեմատ արդյունաբերության ոլորտում գրանցվել է 1.7% անկում՝ պայմանավորված հանքարդյունաբերության 11.5% անկմամբ: Արդյունքում 2021թ. հունվար-սեպտեմբերին 2020թ. համապատասխան ժամանակահատվածի համեմատ արդյունաբերության համախառն թողարկումն աճել է ընդամենը 0.7%-ով, որին 1.0 տոկոսային կետով նպաստել է «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաճյուղի աճը: Հանքարդյունաբերության 0.1% աճի պայմաններում վերջինիս նպաստումն արդյունաբերության աճին եղել է գրեթե զրոյական (0.02 տոկոսային կետ): Հանքարդյունաբերության աննշան աճը հիմնականում մետաղական հանքաքարի արդյունահանման ծավալների կրճատման հետևանք է, ինչի արդյունքում վերջինս հակազդել է հանքարդյունաբերության աճին շուրջ 0.6 տոկոսային կետով: Մետաղական հանքաքարի արդյունահանման ծավալների նվազումը, ըստ էության, կառավարության որդեգրած տնտեսական քաղաքականության արդյունքն է՝ պայմանավորված վերջերս հանքահումքային արտադրանքի արտահանման նկատմամբ լիցենզավորման ճանապարհով լրացուցիչ հարկային բեռ ավելացնելու օրենսդրական փոփոխությամբ: Միաժամանակ, մշակող արդյունաբերության թողարկման ծավալները շարունակում են մնալ անկումային: 2021թ. հունվար-սեպտեմբերի դրությամբ գրանցված 0.6% անկման պայմաններում ենթաճյուղը հակազդել է արդյունաբերության աճին շուրջ 0.4 տոկոսային կետով: Մշակող արդյունաբերության անկումը հիմնականում պայմանավորված է հիմնային մետաղների, ինչպես նաև ծխախոտային արտադրատեսակների արտադրության ծավալների անկմամբ:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը՝ 2021թ. հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ 6.8%-ով աճելուց հետո 2021թ. երրորդ եռամսյակում գրանցել է 7.7% անկում, ինչի արդյունքում հունվար-սեպտեմբերին գյուղատնտեսական արտադրանքի համախառն ծավալները 2020թ. նույն ցուցանիշի համեմատ կրճատվել են 1.5%-ով: Ընդ որում, գյուղատնտեսության անկմանը նպաստել են և՛ բուսաբուծության, և՛

անասնաբուծության ճյուղերում գրանցված անկումները: Բուսաբուծությունը նվազել է 2.4%-ով՝ գյուղատնտեսության համախառն արտադրանքի նվազմանը նպաստելով 1.3 տոկոսային կետով: Անասնաբուծությունը կրճատվել է 0.4%-ով, որի արդյունքում վերջինիս նպաստումն ընդհանուր ոլորտի անկմանը կազմել է 0.2 տոկոսային կետ:

Շինարարության ճյուղում հունվար-ապրիլ ամիսներին գրանցված 20.3% կուտակային աճից հետո աճի տեմպը շարունակաբար դանդաղել է, ինչի արդյունքում հունվար-սեպտեմբերին այն կազմել է ընդամենը 6.4%: Ընդ որում, 2020թ. հունվար-սեպտեմբերին ոլորտում գրանցված 15.7% անկումը փաստում է, որ հաշվետու ժամանակահատվածում շինարարության ծավալները 2019թ. հունվար-սեպտեմբերի համեմատ պահպանվում են 10.3%-ով ցածր մակարդակում, և ոլորտի վերականգնման մասին խոսելը շատ վաղ է: Գրանցված 6.4% աճին 5.2 և 1.5 տոկոսային կետով դրական են նպաստել համապատասխանաբար պետական բյուջեի միջոցներով և բնակչության միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների աճերը: Մինչդեռ կազմակերպությունների կողմից իրականացված շինարարության ծավալները նվազել են 6.7%-ով՝ հակազդելով ընդհանուր ոլորտի աճին 3.0 տոկոսային կետով: Ընդ որում, նշված ուղղությամբ գրանցված 6.7% անկմանը 11.1 տոկոսային կետով նպաստել է օտարերկրյա ներդրողների միջոցներով ֆինանսավորվող շինարարության ծավալների շուրջ 53% կրճատումը:

Ծառայությունների ճյուղում ևս՝ հատկապես հաշվետու տարվա երրորդ եռամսյակում գրանցվել է աճի տեմպի դանդաղում, ինչի արդյունքում 2021թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին գրանցվել է ընդամենը 5.4% աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված 11.9% անկման դիմաց: Հետևաբար, ընդհանուր ծառայությունների ճյուղում ևս տնտեսության ակտիվությունը դեռևս չի վերականգնվել, իսկ նախաճգնաժամային տարվա հունվար-սեպտեմբերի համեմատ ոլորտի անկումը կազմում է շուրջ 7.1%: Գրանցված 5.4% աճին հիմնականում դրական նպաստում են ունեցել կացության և հանրային սննդի կազմակերպման (աճը՝ 70.3%), տրանսպորտի (աճը՝ 22.5%), ինչպես նաև առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման (աճը՝ 43.7%) ենթաճյուղերը՝ համապատասխանաբար 4.1, 2.1 և 2.1 տոկոսային կետով: «Մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ենթաճյուղում գրանցված 36.9% անկումը զգալիորեն՝ շուրջ 8.0 տոկոսային կետով, հակազդել է ընդհանուր ծառայությունների աճին:

Առևտրի շրջանառության աճի տեմպը քննարկվող ժամանակահատվածում ևս թուլացել է՝ հունվար-հունիսին գրանցված 7.9% աճից հետո հունվար-սեպտեմբերին դանդաղելով ընդհանուր առմամբ 1.5 տոկոսային կետով և կազմել

6.4%-ով: 2020թ. հունվար-սեպտեմբերին առևտրաշրջանառության 11.4% անկումը կրկին փաստում է, որ հաշվետու ժամանակահատվածում այս ոլորտում ակտիվությունը ևս ոչ միայն չի վերականգնվել, այլև 2019թ. հունվար-սեպտեմբերի համեմատ առևտրի ծավալները նվազել են շուրջ 5.7%-ով: 2021թ. հունվար-սեպտեմբերին գրանցված 6.4% աճը հիմնականում պայմանավորված է մեծածախ առևտրի 11.0% աճով (նպաստումը՝ 5.6 տոկոսային կետ):

Տնտեսության դանդաղ վերականգնումն ու տնտեսական աճի թուլացող տեմպերը պայմանավորված են ոչ միայն առաջարկի վերոքննարկյալ գործոններով, այլև **ներքին պահանջարկի** չափազանց դանդաղ վերականգնմամբ և շարունակաբար թուլացող տեմպերով:

Հաշվետու ժամանակահատվածում **վերջնական սպառումն** իրական արտահայտությամբ աճել է ընդամենը 3.1%-ով՝ 2021թ. հունվար-հունիս ամիսների համեմատ դանդաղելով 2.5 տոկոսային կետով: **Մասնավոր սպառումն** աճել է 1.9%-ով՝ 2021թ. առաջին կիսամյակի համեմատ դանդաղելով 4.1 տոկոսային կետով: **Պետական սպառումն** աճել է 10.0%-ով՝ վերջին երեք ամիսներին արագանալով 5.9 տոկոսային կետով: Արդյունքում իրական ՀՆԱ-ի 4.1% աճին վերջնական սպառումը նպաստել է մոտ 3 տոկոսային կետով, որից մասնավոր և պետական սպառման նպաստումները կազմել են 1.5-ական տոկոսային կետ: **Ներդրումների**³ աճը 2021թ. հունվար-սեպտեմբերին՝ 2021թ. հունվար-հունիսի համեմատ դանդաղել է 1.6 տոկոսային կետով և կազմել ընդամենը 7.9% (նպաստումն իրական ՀՆԱ-ի աճին՝ 1.0 տոկոսային կետ), այն դեպքում, երբ 2020թ. առաջին ինն ամիսներին գրանցվել էր ներդրումների 14.1% անկում: Ապրանքների և ծառայությունների **արտահանման** ծավալների իրական աճը 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 11.0%՝ 2020թ. նույն ժամանակահատվածում գրանցված 30.0% խոր անկման դիմաց, իսկ **ներմուծման** ծավալների իրական աճը կազմել է ընդամենը 5.3%՝ 31.4% անկման դիմաց:

Արդյունքում, 2021թ. առաջին ինն ամիսների դրությամբ նախաճգնաժամային տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ներքին պահանջարկը որևէ ուղղությամբ դեռևս վերականգնված չէ: Ընդ որում, 2019թ. հունվար-սեպտեմբերի համեմատ 2021թ. հունվար-սեպտեմբերին վերջնական սպառումը նվազել է 4.2%-ով (որից մասնավոր սպառումը՝ 8.4%-ով), ներդրումները նվազել են 7.3%-ով, իսկ արտահանումը և ներմուծումը՝ համապատասխանաբար 22.2%-ով և 21.8%-ով:

³ Ներկայացված են հիմնական միջոցներում ներդրումները՝ հաշվի առնելով, որ 2019 թվականից ՀՀ ՎԿ-ի կողմից համախառն կուտակման մեջ հաշվառվող պաշարների փոփոխության մեջ ներառվում են նաև վիճակագրական շեղումները:

2021 թվականի հունվար-սեպտեմբերին ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է **գների աճի արագացում**՝ պայմանավորված հիմնականում միջազգային գների աճով, ՀՀ դրամի արժեզրկմամբ և երրորդ եռամսյակում գյուղատնտեսության նվազմամբ: 12-ամսյա գնաճը կազմել է 8.9%, իսկ միջին (կուտակային) գնաճը՝ 6.7%: Միջին գնաճին առավելապես նպաստել է «Սննդամթերք և ոչ ակոհոլային խմիչքներ» ապրանքախմբում արձանագրված 9.9% գների աճը (նպաստումը գնաճին՝ 3.7 տոկոսային կետ)՝ հիմնականում պայմանավորված առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների (հացի, թռչնամսի, ձվի, այլ սննդային յուղերի, շաքարի, բանջարեղենի) գների կտրուկ աճերով: Հաշվետու ժամանակահատվածում, հաշվի առնելով ինչպես ներքին տնտեսությունում, այնպես էլ միջազգային պարենային շուկաներում գնաճային զարգացումները և գնաճային սպասումների որոշակի արագացումը, ՀՀ ԿԲ-ն բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 2.0 տոկոսային կետով՝ սահմանելով այն 7.25%:

2021 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին միջին ամսական անվանական **աշխատավարձը** նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ աճել է 6.3%-ով՝ կազմելով 198,757 դրամ: Միջին ամսական անվանական աշխատավարձը պետական հատվածում աճել է 3.6%-ով՝ կազմելով 172,382 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 7.3%-ով և կազմել է 211,178 դրամ: Իրական աշխատավարձը՝ 6.7% գնաճի պայմաններում, 2020 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 0.4%-ով: Ընդ որում պետական հատվածում իրական աշխատավարձը նվազել է 3.1%-ով, իսկ մասնավոր հատվածում աճել է ընդամենը 0.6%-ով:

Տնտեսության վերականգնման շարունակաբար թուլացող տեմպերի պայմաններում՝ 2021 թվականի ինն ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա ունեցել է -1.6 չափով զսպող ազդեցություն՝ պայմանավորված եկամուտների +0.1 չափով չեզոք և ծախսերի -1.7 չափով զսպող ազդեցություններով: Ընդ որում, հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ընդհանուր առմամբ սպասվածից ավելի զսպող է՝ պետական բյուջեից իրականացվող ծախսերի՝ հատկապես կապիտալ ծախսերի թերակատարման հետևանքով:

Այսպիսով, 2021թ. հունվար-սեպտեմբեր ամիսների դրությամբ ՀՀ տնտեսությունը դեռևս չի վերականգնվել, և, ցավոք, այն չի վերականգնվի 2021թ. վերջի դրությամբ ևս՝ նույնիսկ 2020թ. խոր ճգնաժամի հետևանքով տնտեսությունում ձևավորված բազայի էֆեկտի առկայության պայմաններում: Տնտեսական գործընթացների դանդաղման ֆոնին՝ տնտեսության ներուժի

վերականգնման հրամայականը ևս վտանգված է, մի կողմից՝ պայմանավորված պետական ներդրումների (կապիտալ ծախսերի) թերակատարմամբ, մյուս կողմից՝ դրա արդյունքում տնտեսության վրա ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականության սպասվածից ավելի զսպող ազդեցությամբ: Այս պայմաններում ՀՀ բնակչության կենսամակարդակի բարելավում ևս չի նկատվում՝ ոչ միայն կառավարության չափից ավելի զսպող քաղաքականության, այլև բարձր գնաճային միջավայրի և այն արդյունավետ չկառավարելու հետևանքով քաղաքացիների իրական եկամուտների զգալի կրճատման պատճառով:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2021 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 1,201.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճելով 11.8%-ով (126.4 մլրդ դրամով): Վերջինս հիմնականում պայմանավորված է հարկային եկամուտների (այսուհետ՝ ներառյալ նաև պետական տուրքերը) 11.9% աճով (նպաստումը՝ 11.2 տոկոսային կետ), ինչի արդյունքում հարկային եկամուտները կազմել են 1,137.3 մլրդ դրամ (120.5 մլրդ դրամով ավելի): Մնացած 0.6 տոկոսային կետն ապահովվել է պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների միջոցով, որոնք 2020թ. առաջին ինն ամիսների համեմատ կազմել են համապատասխանաբար՝ 5.7 և 58.5 մլրդ դրամ կամ 1.1 և 4.8 մլրդ դրամով ավելի:

Հարկ է նկատել, որ նախաճգնաժամային տարվա՝ 2019թ. առաջին ինն ամիսների համեմատ պետական բյուջեի փաստացի եկամուտները 2021թ. առաջին ինն ամիսների արդյունքներով ավելի են ընդամենը 53.4 մլրդ դրամով՝ այն էլ հիմնականում պայմանավորված չլինելով տնտեսության մեջ ստեղծվող հավելյալ արժեքի միջոցով գեներացվող եկամուտների աղբյուրներով, ինչն էլ արտացոլում է տնտեսության վերականգնման ներկայիս շարունակաբար դանդաղող տեմպը:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները 2021թ. առաջին ինն ամիսներին, մլրդ դրամ

	Առաջին ինն ամիսներ, պլան	Առաջին ինն ամիսներ, ճշտված պլան	Առաջին ինն ամիսներ, փաստացի	Կատարման %-ն առաջին ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ
Ընդամենը եկամուտներ	1,086.2	1,157.2	1,201.5	103.8%
այդ թվում՝				
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,035.0	1,099.1	1,137.3	103.5%
Պաշտոնական դրամաշնորհներ	18.4	19.4	5.7	29.3%
Այլ եկամուտներ	32.8	38.7	58.5	151.4%

Նշենք նաև, որ հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի փաստացի եկամուտները ճշտված պլանի նկատմամբ գերակատարվել են 3.8%-ով (Աղյուսակ 1)՝ ներքին աղբյուրներից ստացվող եկամուտների գերակատարման արդյունքում: Վերջինս, սակայն, տնտեսության ակտիվացման թուլացող գործընթացի ֆոնին հիմնականում պայմանավորված է 2021թ. բյուջեի հիմքում դրված՝ տարվա միջին գնաճի 1.9% կանխատեսման համեմատ չափազանց բարձր գնաճային միջավայրով (2021թ. հունվար-սեպտեմբերին կուտակային գնաճը կազմել է 6.7%): Գնաճի ազդեցության պայմաններում հարկային եկամուտները գերակատարվել են 38.2 մլրդ դրամով (3.5%-ով), իսկ բյուջեի այլ եկամուտները՝ 19.9 մլրդ դրամով (51.4%-ով): Արտաքին աղբյուրներից ստացվող եկամուտները՝ պաշտոնական դրամաշնորհները, սակայն, ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են 13.7 մլրդ դրամով կամ 70.7%-ով:

2021թ. առաջին ինն ամիսներին *հարկային եկամուտների և պետական տուրքերի* 33.7%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի, 28.0%-ը՝ եկամտային հարկի, 11.6%-ը՝ շահութահարկի, 6.7%-ը՝ ակցիզային հարկի, 5.5%-ը՝ մաքսատուրքի, 4.2%-ը՝ բնապահպանական հարկի, 2.8%-ը՝ կուտակային կենսաթոշակի գծով սոցիալական վճարների, իսկ մնացած մասը՝ այլ հարկատեսակների և պետական տուրքերի հաշվին: Մտահոգիչ է, որ շահութահարկի և եկամտահարկի կշիռները հարկային եկամուտների և պետական տուրքերի կառուցվածքում 2020թ. համապատասխան ժամանակահատվածի համեմատ կրճատվել են համապատասխանաբար 0.5 և 2.5 տոկոսային կետերով: Ընդ որում, նախաճգնաժամային տարվա առաջին ինն ամիսների համեմատ 2021թ. համապատասխան ժամանակահատվածում շահութահարկի գծով հավաքագրվել է շուրջ 17.0 մլրդ դրամով ավել քիչ եկամուտ, և 2021-ին գրանցված 7.3% աճը բավարար չի եղել ծածկելու 2020-ին գրանցված 17.5% անկման հետևանքները:

Պաշտոնական դրամաշնորհների բավական ցածր՝ 29.3% կատարողականը հիմնականում պայմանավորված է արտաքին դոնորների կողմից տրամադրվող նպատակային դրամաշնորհների 64.0% թերակատարմամբ (շուրջ 10 մլրդ դրամով): Ընդ որում, նպատակային ծրագրերից 5-ի շրջանակներում նախատեսված 1.8 մլրդ դրամի դրամաշնորհները չեն ստացվել ամբողջությամբ, իսկ 13 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները ստացվել են մասնակիորեն՝ 36.4%-ով, որոնք կազմել են ավելի քան 4.7 մլրդ դրամ: Նշենք նաև, որ ՀՀ կառավարությունը չի ստացել Եվրամիության կողմից բյուջետային աջակցության համաձայնագրով նախատեսված 3.8 մլրդ դրամի չափով ոչ նպատակային դրամաշնորհային միջոցները, որոնք պետք է ուղղվեին Հայաստանում ԿՈՎԻԴ-19-ի կանխարգելման միջոցառումների իրականացմանը: Ցավոք, պաշտոնական դրամաշնորհների զգալիորեն թերակատարման երևույթը

2018-ից ի վեր ստացել է քրոնիկ բնույթ և հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարության կողմից՝ դրամաշնորհների ստացման համար անհրաժեշտ նախապայմաններն ամբողջական և ժամանակին կատարելու անընդունակությամբ:

Բյուջեի այլ եկամուտների մասով նշենք, որ ճշտված պլանի նկատմամբ փաստացի հավաքագրված եկամուտների գերակատարումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ աճը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների օգտագործումից ստացված տոկոսավճարներով, ինչպես նաև ապրանքների մատակարարումից ու ծառայությունների մատուցումից և իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից ստացված եկամուտներով:

2021 թվականի ինն ամիսների ընթացքում պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը 2020 թվականի ինն ամիսների համեմատ էական փոփոխություն չի կրել: Հարկային եկամուտների (ներառյալ՝ պետական տուրքերը) և պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռներն աճել են համապատասխանաբար 0.08 և 0.04 տոկոսային կետով և կազմել 94.65% և 0.47%: Միևնույն ժամանակ, բյուջեի այլ եկամուտների տեսակարար կշիռը նվազել է 0.13 տոկոսային կետով և կազմել 4.87%:

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2021 թվականի առաջին ինն ամիսներին պետական բյուջեի փաստացի ընդհանուր ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 9.7%-ով (119.1 մլրդ դրամով) և կազմել 1,349.1 մլրդ դրամ: Ծախսերի 9.7% աճի 7.8 տոկոսային կետը պայմանավորված է ընթացիկ ծախսերի 8.4% աճով (95.3 մլրդ դրամով), ինչի արդյունքում այն կազմել է 1,223.5 մլրդ դրամ: Կապիտալ ծախսերը⁴ ևս աճել են (23.4%-ով կամ 23.8 մլրդ դրամով) և կազմել 125.5 մլրդ դրամ՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 1.9 տոկոսային կետով: Պետական բյուջեի ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է նպաստների, ոչ ֆինանսական ակտիվների, դրամաշնորհների և պարտքի սպասարկման գծով ծախսերի աճով:

Պետական բյուջեի ծախսերի փաստացի կատարողականը 2021թ. առաջին ինն ամիսների ընթացքում՝ ինչպես բյուջեի պլանի, այնպես էլ ճշտված պլանի նկատմամբ շարունակում է մտահոգությունների առիթ լինել: Մասնավորապես, բյուջեի ընդհանուր ծախսերը ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են

⁴ Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները:

10.3%-ով կամ 154.5 մլրդ դրամով՝ արդյունքում 10.4 մլրդ դրամով չապահովվելով նույնիսկ բյուջեի նախնական պլանային ցուցանիշի կատարումը: Բյուջեի ընթացիկ ծախսերն առաջին ինն ամիսների ընթացքում 115.2 մլրդ դրամի չափով ճշգրտվել են դեպի վերև, որից կատարվել է միայն 20.5 մլրդ դրամի չափով ծախս, իսկ 94.7 մլրդ դրամի չափով ծախսերը չեն իրականացվել՝ հանգեցնելով բյուջեի ճշտված պլանի նկատմամբ փաստացի ընթացիկ ծախսերի 7.2% թերակատարման:

Ծախսերի կատարողականը շարունակում է չափազանց խնդրահարույց մնալ հատկապես կապիտալ ծախսերի մասով: Այսպես, հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացված կապիտալ ծախսերի թերակատարումը բյուջեի ճշտված պլանի նկատմամբ կազմել է 32.2% (չեն իրականացվել 59.8 մլրդ դրամի չափով կապիտալ ծախսերը): Ընդ որում, կապիտալ ծախսերի կատարողականը 19.8%-ով ցածր է նույնիսկ բյուջեի նախնական պլանային ցուցանիշից, ինչը նշանակում է, որ կապիտալ ծախսերի ընդհանուր թերակատարման շուրջ 52%-ը (30.9 մլրդ դրամի չափով) պայմանավորված է նախապես պլանավորված ծախսերը ժամանակին և ամբողջ ծավալով իրականացնելու՝ ՀՀ կառավարության ստանձնած հանձնառության ապահովման անընդունակությամբ:

Աղյուսակ 2. Պետական բյուջեի ծախսերը (տնտեսագիտական դասակարգմամբ) 2021թ. առաջին ինն ամիսներին, մլրդ դրամ

	Առաջին ինն ամիսներ, պլան	Առաջին ինն ամիսներ, ճշտված պլան	Առաջին ինն ամիսներ, փաստացի	Կատարման %-ն առաջին ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ
Ընդամենը ծախսեր	1,359.5	1,503.6	1,349.1	89.7%
այդ թվում՝				
Ընթացիկ ծախսեր	1,203.0	1,318.3	1,223.5	92.8%
այդ թվում՝				
Աշխատանքի վարձատրություն	129.3	128.6	121.5	94.5%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	141.3	144.8	115.8	79.9%
Տոկոսավճարներ	134.8	134.7	127.6	94.7%
Սուբսիդիաներ	96.9	106.3	100.1	94.1%
Դրամաշնորհներ	121.0	151.7	137.2	90.4%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	395.8	455.3	443.8	97.5%
Այլ ծախսեր	183.8	196.7	177.5	90.3%
Կապիտալ ծախսեր⁵	156.5	185.3	125.5	67.8%
այդ թվում՝				

⁵ Նկատի է առնվում ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր այդ թվում՝	156.5	185.3	126.6	68.3%
Հիմնական միջոցներ այդ թվում՝	156.5	185.1	126.4	68.3%
Շենքեր և շինություններ	136.4	160.5	114.2	71.2%
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	17.0	18.4	10.3	55.9%
Այլ հիմնական միջոցներ	3.0	6.2	1.9	30.4%
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	0.0	0.0	-1.0	-

2021թ. առաջին ինն ամիսների բյուջեի ընթացիկ ծախսերի բաղադրիչների մասով առանձնացնենք հետևյալ դիտարկումները.

- Պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը տրամադրվել է 121.5 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ ավելի է ընդամենը 0.5%-ով կամ 0.6 մլրդ դրամով: Բյուջեի ճշտված պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 94.5%:
- Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով իրականացվել է 115.8 մլրդ դրամի չափով ծախս՝ ապահովելով բյուջեի ճշտված պլանով նախատեսված ծախսերի 79.9%-ի կատարումը և գերազանցելով 2020թ. նույն ցուցանիշը 2.4%-ով:
- Կառավարության պարտքի սպասարկման տոկոսավճարները կազմել են 127.6 մլրդ դրամ՝ ապահովելով իննամսյա ճշտված պլանի 94.7% կատարողական և գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը 9.9 մլրդ դրամով կամ 8.4%-ով: Նշված ժամանակահատվածում տոկոսավճարների աճը պայմանավորված է մի կողմից՝ կառավարության պարտքի ծավալային աճով, մյուս կողմից՝ վերջինիս կառուցվածքում պետական գանձապետական պարտատոմսերի տեսակարար կշռի աճով, ինչի արդյունքում ներքին տոկոսավճարներն աճել են 20.6%-ով՝ ընդհանուր տոկոսավճարների 8.4% աճին նպաստելով 9.5 տոկոսային կետով: Արտաքին պարտքի սպասարկման տոկոսավճարները նվազել են 2.2%-ով՝ ընդհանուր տոկոսավճարների աճին հակազդելով 1.2 տոկոսային կետով: Արտաքին տոկոսավճարների նվազումը մի կողմից պայմանավորված է կառավարության պարտքի կառուցվածքում արտաքին պարտքի կշռի նվազմամբ, մյուս կողմից՝ արտաքին վարկերի գծով միջին կշռված անվանական տոկոսադրույքի նվազմամբ:

- Պետական բյուջեից տրամադրված *սուբսիդիաները* կազմել են 100.1 մլրդ դրամ՝ ապահովելով իննամսյա ճշտված պլանի 94.1%-ը, և գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը 13.7 մլրդ դրամով կամ 15.9%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված է ԿՈՎԻԴ-19-ի տնտեսական հետևանքների չեզոքացման, գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման, ինչպես նաև Համաշխարհային բանկի (ՀԲ) աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում տրամադրված սուբսիդիաների աճով:
- Պետական բյուջեից տրամադրված *դրամաշնորհները* կազմել են 137.2 մլրդ դրամ՝ ապահովելով իննամսյա ճշտված պլանի կատարումը 90.4%-ով, և գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը 15.7 մլրդ դրամով կամ 12.9%-ով: Վերջինս հիմնականում պայմանավորված է այլ ընթացիկ դրամաշնորհներում ներառված՝ գինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման ծախսերի 3.1 անգամ աճով, ինչն էլ արտացոլում է դրոշմանիշային վճարների դրույքաչափերի բարձրացումը: Դրամաշնորհների աճին նպաստել է նաև համայնքներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով ծախսերի 16.7% աճը:
- *Սոցիալական նպաստների և կենսաթոշակների* վճարման գծով կատարված ծախսը կազմել է 443.8 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 97.5%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ուղղությամբ կատարված ծախսերն աճել են 9.9%-ով (39.9 մլրդ դրամով), ինչին 10.6 տոկոսային կետով նպաստել է սոցիալական նպաստների 30.4% աճը (42.7 մլրդ դրամ), իսկ կենսաթոշակներին ուղղվող ծախսերը կրճատվել են 1.1%-ով և հակազդել գրանցված 9.9% աճին 0.7 տոկոսային կետով: Սոցիալական նպաստների 30.4% աճը հիմնականում ռազմական դրությամբ պայմանավորված ծախսերի աճի արդյունք է:
- Պետական բյուջեից իրականացվող այլ ծախսերը կազմել են 177.5 մլրդ դրամ՝ ապահովելով բյուջեի ճշտված պլանի 90.3%-ի կատարումը: 2020թ. նույն ցուցանիշի համեմատ բյուջեի այլ ծախսերն աճել են 7.8%-ով (12.8 մլրդ դրամով)՝ ինչը հիմնականում երկու միջոցառումների գծով կատարված ծախսերի աճի արդյունք է: Առաջինը «ՀՀ-ում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների իրականացում» միջոցառումն է, երկրորդը՝ «Ռազմական կարիքների բավարարում» միջոցառումը: Հաշվետու ժամանակահատվածում վերջիններս կազմել են համապատասխանաբար 14.5 մլրդ դրամ (աճը՝ 9.6%) և 134.6 մլրդ դրամ (աճը՝ 5.7%):

2021թ. առաջին ինն ամիսների ընթացքում իրականացված կապիտալ ծախսերի բաղադրիչների մասով նշենք, որ.

- Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 126.6 մլրդ դրամ՝ ապահովելով բյուջեի ճշտված պլանի կատարումն ընդամենը 68.3%-ով: Շուրջ 31.7% թերակատարումը հիմնականում պայմանավորված է տրանսպորտի, պաշտպանության, հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության, ոռոգման, կրթության ու ջրամատակարարման ոլորտներում իրականացվող ծրագրերի ցածր կատարողականով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերն աճել են 22.8%-ով կամ 23.5 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավման, ինչպես նաև ճանապարհային տրանսպորտի և ջրամատակարարման ոլորտներում իրականացված կապիտալ ծախսերի աճով:
- Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից հաշվետու ժամանակահատվածում ստացվել են մոտ 1 մլրդ դրամ մուտքեր՝ բյուջեի իննամսյա ճշտված պլանով նախատեսված 1.3 մլն դրամի և 2020 թվականի նույն ժամանակահատվածում ստացված 1.3 մլրդ դրամի դիմաց:

Ինչ վերաբերում է քննարկվող ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի կառուցվածքային փոփոխությանը, ապա պետք է նկատենք, որ 2020թ. առաջին ինն ամիսների համեմատ կապիտալ ծախսերի կշիռն ընդհանուր ծախսերի կառուցվածքում ավելացել է 1.0 տոկոսային կետով, և նույն չափով նվազել է ընթացիկ ծախսերի կշիռը՝ ապահովելով համապատասխանաբար 9.3% և 90.7% համամասնություն: Այդուհանդերձ, ընդհանուր ծախսերի, հատկապես կապիտալ ծախսերի, չափազանց ցածր կատարողականի արդյունքում ՀՀ կառավարությանը չի հաջողվել ապահովել բյուջեի ճշտված պլանով կապիտալ և ընթացիկ ծախսերի համար սահմանված կառուցվածքային համամասնությունը՝ համապատասխանաբար 12.3% և 87.7%: Շուրջ 3.0 տոկոսային կետով կապիտալ ծախսերի կշռի դեպի ներքև շեղումը ևս մեկ անգամ արտացոլում է տնտեսության երկարաժամկետ աճին և ներուժի վերականգնմանն ուղղվող ծախսերի անարդյունավետ կառավարման փաստը:

ՀՀ կառավարության հակաճգնաժամային հարկաբյուջետային միջոցառումները շարունակել են իրականացվել նաև 2021թ. առաջին ինն ամիսների ընթացքում՝ և՛ ԿՈՎԻԴ-19-ի համավարակի, և՛ Արցախյան պատերազմի հետևանքների հակազդման ու մեղմման ուղղությամբ: Մասնավորապես՝ ԿՈՎԻԴ-19-ի հետևանքների մեղմման նպատակով նշված ժամանակահատվածում իրականացվել է շուրջ 27.6 մլրդ դրամի չափով ծախս, որի կազմում

առողջապահական ծրագրերին ուղղված ծախսերը կազմել են 18.0 մլրդ դրամ, իսկ տնտեսական աջակցության ծրագրերինը՝ 8.9 մլրդ դրամ: Արցախյան պատերազմի հետևանքների հակազդման ուղղությամբ իրականացված ծախսերը կազմել են շուրջ 57.2 մլրդ դրամ, որից սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը՝ 54.6 մլրդ դրամ, իսկ վարկերի գծով 2021 թվականի ինն ամիսներին Արցախի Հանրապետությանը պետական բյուջեից տրամադրվել է 27.4 մլրդ դրամի լրացուցիչ բյուջետային վարկ:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

2021 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեն կատարվել է 147.5 մլրդ դրամ պակասուրդով: Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են -92.3 մլրդ դրամ (պարտավորությունների մարումը գերազանցել է նոր պարտավորությունների ստանձման չափը), իսկ արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է 239.8 մլրդ դրամ: Բյուջեի պակասուրդը 7.3 մլրդ դրամով (4.7%-ով) զիջում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Նշենք նաև, որ 2021թ. առաջին ինն ամիսների արդյունքներով 57.4%-ով (198.8 մլրդ դրամի չափով) թերակատարվել է բյուջեի ճշտված պլանով նախատեսված 346.3 մլրդ դրամ պակասուրդը: Ընդ որում, իննամսյա ճշտված պլանից պակասուրդի 198.8 մլրդ դրամի չափով դեպի ներքև շեղման 77.7%-ը պայմանավորված է բյուջեի ծախսերի 154.5 մլրդ դրամի չափով թերակատարմամբ, իսկ 22.3%-ը՝ եկամուտների 44.3 մլրդ դրամի չափով գերակատարմամբ:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները 2021թ. առաջին ինն ամիսներին, մլրդ դրամ

	Առաջին ինն ամիսներ, պլան	Առաջին ինն ամիսներ, ճշտված պլան	Առաջին ինն ամիսներ, փաստացի	Կատարման %-ն առաջին ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ
Եկամուտներ	1,086.2	1,157.2	1,201.5	103.8%
Ծախսեր	1,359.5	1,503.6	1,349.1	89.7%
Պակասուրդ	273.3	346.3	147.5	42.6%

5. ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀՀ պետական պարտքը 2021 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 9,038.1 մլն ԱՄՆ դոլար՝ 15.1%-ով կամ 1,183.5 մլն ԱՄՆ դոլարի չափով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը (7,854.6 մլն ԱՄՆ դոլարը): Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության պարտքն աճել է 16.1%-ով և կազմել 8,564.5 ԱՄՆ դոլար՝ 15.2 տոկոսային կետով նպաստելով

ընդհանուր պարտքի աճին: ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը 0.1 տոկոսային կետով հակազդել է պետական պարտքի աճին՝ նվազելով 1.4%-ով և կազմել 473.6 ԱՄՆ դոլար (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Պետական պարտքը 2021թ. և 2020թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ, մլն ԱՄՆ դոլար

	30.09.2020թ.	30.09.2021թ.	Աճի տեմպը
ՀՀ պետական պարտք	7,854.6	9,038.1	115.1%
այդ թվում՝			
ՀՀ կառավարության պարտք	7,374.5	8,564.5	116.1%
ՀՀ կենտրոնական բանկի պարտք	480.1	473.6	98.6%

ՀՀ պետական պարտքի կառուցվածքում նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ 2021թ. առաջին ինն ամիսների արդյունքներով ՀՀ կենտրոնական բանկի պարտքի մասնաբաժինը նվազել, իսկ ՀՀ կառավարության պարտքի մասնաբաժինն ավելացել է 0.9 տոկոսային կետով՝ կազմելով համապատասխանաբար 5.2% և 94.8%:

2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը դոլարային արտահայտությամբ 2020-ի տարեվերջի համեմատ աճել է 10.0%-ով և կազմել 6,665.6 մլն ԱՄՆ դոլար, որից 6,192.0 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության արտաքին պարտքն է (2020-ի տարեվերջի համեմատ աճը՝ 10.6%): Իսկ ՀՀ ներքին պետական պարտքը (նույնն է, թե ՀՀ կառավարության ներքին պարտքը) 2020-ի տարեվերջի համեմատ աճել է 24.3%-ով և կազմում է 2,372.5 մլն ԱՄՆ դոլար:

Հարկ է հիշել, որ 2020թ. տարեվերջի դրությամբ ՀՀ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 67.4%, իսկ ՀՀ կառավարության պարտքի կշիռը ՀՆԱ-ում գերազանցել է հարկաբյուջետային կանոններով սահմանված 60%-ի շեմը և կազմել 63.5%: 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՀ-ում գնահատվում⁶ է 62.1%, իսկ կառավարության պարտքի համապատասխան ցուցանիշը՝ 58.9%: ՀՀ կառավարության սպասումներով⁷ 2021թ. տարեվերջին կառավարության պարտքի կշիռը ՀՆԱ-ում թեև 2020թ. նույն ցուցանիշի համեմատ կնվազի 2.7 տոկոսային կետով, այն

⁶ Հաշվարկում օգտագործվել է «ՀՀ 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում ներկայացված 2021թ. անվանական ՀՆԱ-ի կանխատեսումը:

⁷ https://www.minfin.am/website/images/website/documents/2.Uxerdz_bacatragir.docx, էջ 70:

շարունակելու է պահպանվել 60%-ից բարձր մակարդակում՝ շուրջ 60.8%: Մտահոգիչ է, որ 2021թ. ՀՀ կառավարությունը կրկին գործում է հարկաբյուջետային կանոնների շեղմամբ («բացառիկ դեպքի» կարգավորումների համաձայն), ինչը նշանակում է, որ բյուջեի պակասուրդն ավելի մեծ է, քան կապիտալ ծախսերը, իսկ պակասուրդի ֆինանսավորման համար ներգրավված պարտքային միջոցները չեն ուղղվում տնտեսության ներուժի վերականգնման և ամրապնդման համար նախատեսված միջոցառումների իրականացմանը՝ կրճատելով երկարաժամկետ կայուն տնտեսական աճի ապահովման հնարավորությունները:

ԱՄՓՈՓՈՒՄ

2021թ. առաջին ինն ամիսների արդյունքները փաստում են, որ 2020թ. խոր տնտեսական ճգնաժամից հետո՝ հետճգնաժամային շրջանում ՀՀ տնտեսությունը դեռևս չի վերականգնվել՝ իր վրա կրելով երկրում կուտակված անվտանգային, մակրոտնտեսական և առողջապահական ռիսկերի չնվազող ազդեցությունները և դրանց չեզոքացմանն ուղղված սոցիալ-տնտեսական քաղաքականության միջոցառումների անարդյունավետ կառավարման հետևանքները: Հատկապես հաշվետու տարվա երրորդ եռամսյակում կառավարությանը չի հաջողվել բավարար ջանք գործադրել տնտեսությունը խթանելու հարցում, ինչի արդյունքում վերջինիս սպասումները՝ տարեվերջին 6.5% տնտեսական աճ գրանցելու վերաբերյալ՝ 2021թ. առաջին ինն ամիսներին արձանագրված 4.1% ցուցանիշի պայմաններում չափազանց լավատեսական են թվում, իսկ երկնիշ տնտեսական աճի խոստումները՝ բոլորովին անիրատեսական:

Տնտեսական աճի կառուցվածքն իր հերթին ևս հետճգնաժամային շրջանում բավական մտահոգիչ է. տնտեսությունը շարունակում է առաջ շարժվել սպառման մոդելի հիմքով, իսկ մեծածավալ ներդրումների մասին ստեղծված իրավիճակում խոսելը նույնիսկ շոայլություն է թվում: Մյուս կողմից՝ տնտեսության արտահանելի հատվածը գրեթե չի աճում. անկումային են գյուղատնտեսության և մշակող արդյունաբերության ճյուղերը, իսկ հանքարդյունաբերության ոլորտն աճում է չափազանց դանդաղ տեմպերով: Փոխարենը, աճը հարաբերականորեն բարձր է ոչ արտահանելի հատվածում՝ շինարարության, առևտրի և ծառայությունների ճյուղերում: Արդյունքում վտանգված է տնտեսության ոչ միայն վերականգնման, այլև ներուժի ընդլայնման և տնտեսության կառուցվածքի առողջացման հեռանկարը:

ՀՀ կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունը հաշվետու ժամանակահատվածում ևս չի արտացոլել տնտեսության վերականգնման համար անհրաժեշտ՝ կառավարման համակարգված-արդյունավետ ջանքի ներդրման

հրամայականը՝ արդյունքում տնտեսության վրա թողնելով սպասվածից ավելի զսպող ազդեցություն:

Թեև բյուջետային եկամուտները 2021թ. հունվար-սեպտեմբեր ամիսների արդյունքներով 2020թ. համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել են՝ հիմնականում պայմանավորված հավաքագրված հարկային եկամուտների աճով, այդուհանդերձ վերջինս եղել է մասնավորապես կանխատեսվածից չափազանց բարձր գնաճային միջավայրի հետևանք: Մյուս կողմից, զգալիորեն թերակատարվել են պետական բյուջե մուտքագրվող պաշտոնական դրամաշնորհները՝ հիմնականում պայմանավորված կառավարության կողմից նպատակային ծրագրերը ժամանակին և բարձր որակով կատարելու անընդունակությամբ, ինչը շարունակական բնույթ է կրում դեռևս 2018 թվականից:

Բյուջետային ծախսերի կատարողականը հաշվետու ժամանակահատվածում ևս մտահոգիչ է: Մասնավորապես, կապիտալ ծախսերի կատարողականը իննամյա բյուջեի ճշտված պլանի նկատմամբ 2021թ. առաջին ինն ամիսների արդյունքներով կազմել է ընդամենը 67.8%: Ընդ որում, ՀՀ կառավարությունն ունակ չի եղել իրականացնելու շուրջ 58.7 մլրդ դրամի չափով ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր՝ կապիտալ ներդրումներ, ինչը հատկապես կարևոր է հետճգնաժամային շրջանում տնտեսության ներուժի վերականգնման և երկարաժամկետ կայուն տնտեսական աճի խթանման համատեքստում: Արդյունքում վատթարացել է նաև պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը, քանի որ փաստացի կատարված կապիտալ ծախսերի կշիռն ընդհանուր բյուջետային ծախսերում նախատեսված 12.3%-ից ցածր է 3.0 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքը հաշվետու ժամանակահատվածում նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ աճել է 16.1%-ով: ՀՀ կառավարության սպասումներով կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2021թ. տարեվերջին կկազմի 60.8%՝ պահպանվելով հարկաբյուջետային կանոններով սահմանված 60%-ի շեմից բարձր մակարդակում: Մտահոգիչ է, որ վերցված պարտքը վերջին տարիներին չի ուղղվում տնտեսության ներուժի վերականգնման և ընդլայնման համար նախատեսված ծախսերի կատարմանը՝ հարկաբյուջետային կանոններից շեղման և «բացառիկ դեպքի» կարգավորումների պայմաններում:

Ստեղծված իրադրությունը փաստում է, որ հետճգնաժամային շրջանում ՀՀ կառավարությունն ի զորու չէ բարձր արդյունավետությամբ կառավարել տնտեսությունում շարունակաբար կուտակվող անվտանգային, առողջապահական և մակրոտնտեսական ռիսկերը: Դրանց խորացման պայմաններում տնտեսության վերականգնման կարողությունների շրջանակը գնալով ավելի է նեղանում՝

սահմանափակելով առաջիկայում ճգնաժամի սոցիալ-տնտեսական հետևանքների վերացման հնարավորությունները:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան **ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**